

24.06.2021 17:30



ՀՀ փաստաբանների պալատը 24.06.2021թ. կազմակերպել է խորհրդակցություն **Ադրբեջանում ընթացող դատավարություններում հայ ռազմագերիներին իրավաբանական օգնություն ցույց տալու արդյունավետության հարցի շուրջ:**

Խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ **Արա Զոհրաբյանը**, նախագահի առաջին տեղակալ **Մանե Կարապետյանը**, նախագահի տեղակալ **Հարութ Ակլունցը**, փաստաբաններ **Հայկ Ալունյանը** և **Արա Ղազարյանը:**

Խորհրդակցությանը ներկա են գտնվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ **Եղիշե Կիրակոսյանը** և ներկայացուցչի տեղակալ **Լիպարիտ Դրմեյանը:** ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչը փաստաբաններին ընդհանուր տեղեկություններ է տրամադրել հայ ռազմագերիների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննվող գործերի ընթացքի մասին:

Փաստաբանները քննարկել են Ադրբեջանում հայ ռազմագերիներին իրավաբանական օգնություն ցույց տալու, ինչպես նաև հնարավոր խախտումները բացահայտելու և հիմնավորելու անհրաժեշտության և արդյունավետության հարցը: Փաստաբանները մտահոգություն են հայտնել առ այն, որ Ադրբեջանը խոչընդոտելու է ՀՀ փաստաբանների կողմից հայ ռազմագերիներին իրավաբանական օգնության տրամադրմանը:

Քննարկման արդյունքում, Փաստաբանների պալատը որոշել է դիմել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին, Ադրբեջանի իրավասու մարմիններին, Ադրբեջանի փաստաբանների միությանը, ինչպես նաև միջազգային այլ կառույցներին՝ *հայ ռազմագերիներին Հայաստանի Հանրապետության փաստաբանների միջոցով իրավաբանական օգնություն ցույց տալն ապահովելու, ՀՀ փաստաբանների մոտքը Ադրբեջան թուլյատրելու և նրանց անվտանգությունը երաշխավորելու հարցերով:*

Վերոգրյալը հաշվի առնելով խնդրում ենք մինչև **2021թ. հունիսի 29-ը`**

- Ադրբեջանում հայ ռազմագերիներին  
իրավական օգնություն ցույց տալու  
պատրաստակամություն ունեցող **քրեաիրավական  
մասնագիտացման փաստաբաններին`**  
info@advocates.am էլեկտրոնային փոստին գրություն  
ուղարկելու միջոցով տեղեկացնել այդ մասին:

- **Հայ ռազմագերիների ընտանիքի  
անդամներին`** Ադրբեջանում ՀՀ փաստաբանի  
միջոցով ներկայացված լինելու ցանկության դեպքում  
դիմել ՀՀ փաստաբանների պալատ:

Հարգանքով`

ՀՀ փաստաբանների պալատի

մամուլի խոսնակ` Տաթևիկ Բուջատյան

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```